ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Գ.Գյուլբենկյանի անվան հ.190 ավագ դպրոց» ՊՈԱԿ

# ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

*2023- 2024 ուստարի*

| | Ամիսը, ամսաթիվը | Քայլը | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|
| 1. | Սեպտեմբեր 1 | Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում: | Դասացուցակը հաստատվում է տնօրենի հրամանով: |
| 2. | Սեպտեմբեր 1 | Հաստատել պարտադիր բժշկական զննության ենթակա աշխատողների ցանկը: | ՀՀ ԱՕ հոդված 249 http://www.irtek.am/views/act.aspx?aid=150003 |
| 3. | Սեպտեմբեր 1 | Հաստատել դասարանների կազմը, նշանակել դասղեկ-համակարգողներ: | Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝դպրոցի մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, դպրոցի տնօրենի հրամանով: |
| 4. | Սեպտեմբեր 1 | Նշանակել մ/մ նախագահներ: | Տնօրենի հրաման (համաձայնագրի հիման վրա) |
| 5. | Սեպտեմբեր | | Նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակել և խորհրդի հաստատմանը ներկայացնել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը: Նշանակել փաստաթղթերի ընդունման պատասխանատու:Կանոնադրություն (48.7) |
| 6. | Սեպտեմբեր 1-7 | Առանձին ուսումնական առարկաների թեմատիկ պլանների հաստատում տնօրենի կողմից: | Թեմատիկ (օրացուցային) պլանը կազմվում է առարկան դասավանդող ուսուցչի կողմից և մեթոդմիավորման նախագահի երաշխավորությամբ  ներկայացվում տնօրենի հաստատմանը: |
| 7. | Սեպտեմբեր 1-8 | Սովորողների առաջին ընդհանուր ժողովի հրավիրում: Աշակերտական խորհրդի ձևավորման նախապատրաստում: | Սովորողների առաջին ընդհանուր ժողովը հրավիրվում է տնօրենի կողմից: Աշակերտական խորհուրդը ձևավորվում է հաստատության  10-12-րդ դասարանների դասարանական ժողովներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից, դասարանական ժողովներից հետո՝ 10-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուսումնական տարվա Սեպտեմբեր 20: |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Սեպտեմբեր 1-5 | Պայմանով փոխադրված աշակերտների փաստացի գիտելիքները ստուգելու նպատակով ստեղծել մասնագիտական խումբ(տնօրենի հրաման): | Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եվ ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ (49,51, 52 կետ) https://www.arlis.am/documentview.aspx?docid=160662 |
| 9. | Սեպտեմբեր 5-15 | Հաստատել պայմանով փոխադրված աշակերտների անհատական ուսուցման ծրագրերը և կազմել լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց: | |
| 10. | Սեպտեմբեր 1-15 | Տարիֆիկացիոն ու հաստիքային ցուցակների և ամենամյա ծախսերի նախահաշվի կազմում և ներկայացում հաստատման | Այդ փաստաթղթերը կազմում է տնօրենը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը: |
| 11. | | | |
| 12. | Սեպտեմբեր 1-15 | Հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի նախագծի և բյուջետային օրացույցի կազմում | Հաստատության բյուջեի նախագիծը կազմում է տնօրենը և ներկայացնում խորհրդի քննարկմանը:<br>Բյուջետային օրացույցը կազմվում է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությամբ ամրագրված ժամանակացույցին համապատասխան: |
| 13. | Սեպտեմբեր 6-10 | Ուսպլանի, հաստիքացուցակի, առաջին կիսամյակի դասացուցակի և դասաբաշխման, առարկայական թեմատիկ պլանների, սովորողների անձնական գործերի լրացում emis.am էլեկտրոնային համակարգում | Առաջին կիսամյակի դասացուցակի, առարկայական թեմատիկ պլանների հաստատումից և սովորողների համակազմի ձևավորումից հետո դասացուցակը, թեմատիկ պլանները, սովորողների անձնական գործերում ընդգրկված տվյալները լրացվում են emis.am էլեկտրոնային համակարգում: Կատարվում է նաև ուսուցիչների վերաբերյալ տվյալների փոփոխություն՝ առկայության դեպքում: |
| 14. | Սեպտեմբեր 1-20 | Դասարանների և հաստատության ծնողական խորհուրդների ձևավորում: Հաստատության ծնողական | Անցկացվում են դասարանական ծնողական ժողովներ, որոնց կողմից ընտրված ծնողական խորհուրդների կազմից ձևավորվում է հաստատության ծնողական |

| | | | |
|---|---|---|---|
| | | ժողովի անցկացում: | խորհուրդը:<br>Անցկացվում է հաստատության ծնողական ժողով՝ տնօրենի մասնակցությամբ: |
| 15. | Սեպտեմբեր 20 | Համադպրոցական միջոցառում անկախության 31-րդ տարդարձին նվիրված: | Կազմել աշխատանքային խումբ, պատասխանատու նշանակել ՄԿԱ գծով տեղակալին: |
| 16. | Սեպտեմբեր | 10-րդ դասարաններում հայտորոշիչ ստուգում/հիմնականում հոսքային առարկաներից/: | Արդյունքները քննարկվում են առարկայական մեթոդմիավորման սեպտեմբեր ամսվա նիստում: |

Հոկտեմբեր

| | Ամիսը, Ամսաթիվը | Քայլը | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|
| 17. | Հոկտեմբեր 3-10 | Ֆինանսավորման նոր կարգի մասին իրազեկում:<br>Բյուջեի նախագծի քննարկումների կազմակերպում և բյուջեի նախագծի լրամշակում: | Բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստական փուլում տնօրենը բյուջետային գործընթացին անհրաժեշտ ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների վերջնական արդյունքների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացնում է՝<br>1) բյուջեի նախագծի հանրային քննարկման կազմակերպումը՝ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու համար.<br>2) բյուջեի նախագծի քննարկումը մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների, կառավարման խորհրդի հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով.<br>3) ստացած դիտողությունների և առաջարկությունների հիման վրա բյուջեի նախագծի վերջնական տարբերակի մշակումը:<br>Տես՝<u>Օրինակելի կանոնադրություն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի, կետ 51-53:</u> |
| 18. | Հոկտեմբեր | Հիշատակի այգում | |

| | | | |
|---|---|---|---|
| | | շինաշխատանքների կազմակերպում | |
| 19. | Հոկտեմբեր | Առարկայական մեթոդմիավորումների նիստեր | Հանրակրթական ուսումնական հաստատության առարկայական մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության, դրանց իրականացման հետ կապված և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանն ուղղված այլ հարցեր: |
| 20. | Հոկտեմբեր 11-12 | Հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցություն | Անդրադարձ է արվում պայմանով փոխադրված աշակերտների հետ տարվող աշխատանքներին, առարկայական օլիմպիադաներին նախապատրաստությանը, դպրոցական փուլի անցկացման և տարածքային փուլին սովորողներին նախապատրաստելու հարցերին: Խորհրդակցությունը քննարկում է նաև էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումների հարցը, նշում թերությունները, տրվում են հանձնարարություններ դրանք որոշակի ժամկետում շտկելու ուղղությամբ: |
| 21. | Հոկտեմբեր 24-30 | Կլոր սեղաններ /10-րդ դասարանների/ | Ժողով-քննարկում 10-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների, դասղեկի, ուսուցչի օգնականի, հոգեբանի, անչափահասների տեսուչի, տնօրենի տեղակալների, տնօրենի մասնակցությամբ: |
| 22. | Հոկտեմբեր 15-30 | Էլ. մատյանների ստուգում, աշխատողների և աշակերտների անձնական գործերի ստուգում: | Աշխատողների և աշակերտների անձնական գործերի ստուգում-տնօրեն, դասղեկներ, օպերատոր, Էլ մատյանների գրանցումների ստուգում-տնօրենի ուս. գծով տեղակալներ: Հաճախումների հաշվառման ստուգում-ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ |

Նոյեմբեր-դեկտեմբեր

| | Ամիսը, Ամսաթիվը | Քայլը | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|
| 23. | Նոյեմբեր 5-20 | Սովորողների ուսումնական առաջադիմության ամփոփում: Ծնողական ժողովներ | Ժողովին ներկա են գտնվում ուսուցիչները/ պարտադիր է հոսքային առարկաների ուսուցիչների ներկայությունը/ ներկայացնում են սովորողների հայտորոշիչ գրավոր աշխատանքների արդյունքները, սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսների ընթացքում կատարած աշխատանքները, ձեռքբերումներն ու թերությունները: |
| 24. | Նոյեմբեր 6-10 | Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալների և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն: | Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է մանկավարժական խորհրդի առաջիկա նիստի օրակարգում ընդգրկված հարցեր, մասնավորապես՝ ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների հարցը: |
| 25. | նոյեմբեր 10-16 | Մանկավարժական խորհրդի նիստ | <u>Մանկավարժական խորհրդի</u> նիստն անդրադառնում է տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով տեղակալների, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցության կողմից քննարկված հարցերին՝<br>• առարկայական օլիմպիադաներին նախապատրաստությանը,<br>• էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումներին,<br>• պայմանով փոխադրված աշակերտների հետ տարվող աշխատանքների իրականացմանը,<br>• Վերաքննությունների անցկացման |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ժամանակացույցի կազմմանը: Քննարկում է նաև ուսումնական տարվա առաջին ամիսներին (սեպտեմբեր-հոկտեմբեր) ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների, թեմատիկ պլանների և էլեկտրոնային մատյանների վարման հարցեր:<br>Տես՝ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն,<br>• կետ 79-80: |
| 26. | Նոյեմբեր 15-20 | Տնօրենի հրամանը առարկայական օլիմպիադաների հանձնաժողովների կազմի հաստատման մասին: | Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի նախապատրաստության և կազմակերպման համար հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում են առարկայական օլիմպիադաների հանձնաժողովներ: |
| 27. | Նոյեմբեր 15 – 20 | Մեթոդմիավորումների կողմից հարցաշարերի կազմում և հաստատում տնօրենի կողմից: | Մեթոդմիավորումների կողմից հասարակագիտական առարկաների և ՆԶՊ-ի առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հարցաշարերը և ստուգող հանձնաժողովների անվանացանկը կազմվում ու ներկայացվում են տնօրենի հաստատմանը:<br>ԲՏՃՄ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն անցկացվում է առցանց տարբերակով՝ կենտրոնացված կարգով մշակված հարցաշարերով: |
| 28. | Նոյեմբեր15-30<br>Ապրիլ15-30 | Պայմանով փոխադրված աշակերտների համար կազմակերպել վերաքննություններ: | Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եւ ուսումնական տարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | *բացակայած սովորողի ՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ (49,51, 52 կետ) https://www.arlis.am/documentview.aspx?docid=160662* |
| *29.* | *Նոյեմբեր* | *Համագործակցություն դպրոցների հետ «Մեդիագրագիտության շաբաթ» -ի շրջանակներում* | *Համագործակցությունն իրականացնել աշակերտական խորհուրդների միջոցով(սեմինարներ հիմնական դպրոցներում մեդիագրագիտության մակարդակին նպաստող և Մեդիալոգ թիմի խաղի ներկայացում):* |
| *30.* | *Նոյեմբեր 22 – 26* | *«Հայոց լ.», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն 12-րդ դասարաններում տնօրենության կողմից տրվող ստուգողական աշխատանքների միջոցով :* | *Ամրագրել հրամանով: Արդյունքները վերլուծել մ/մ նիստում և մանկավարժական խորհրդի նիստում:* |
| *31.* | *Նոյեմբեր 15-25* | *«Ոսկե աշուն» համադպրոցական միջոցառման կազմակերպում:* | |
| *32.* | *Նոյեմբեր - դեկտեմբեր* | *Տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ 12-րդ դասարաններում քննական առարկաներից:* | *Նպատակ ՝ գիտելիքի ստուգում, ծանոթացում թեստին և ձևաթղթին:* |
| *33.* | *Նոյեմբեր - դեկտեմբեր* | *Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում, արդյունքների ամփոփում:* | *Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն անցկացվում է՝*<br>- *ԲՏՃՄ բնագավառի առարկաներինը ՝ կենտրոնացված կարգով մշակված առարկայացանկով,*<br>- *հասարակագիտական առարկաներինը և ՆԶՊ առարկայինը ՝ ուսումնական* |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հաստատության մեթոդմիավորումների կողմից մշակված հարցաշարերով: Օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքներն ամփոփվում և քաղաքային (շրջանային) փուլին մասնակցող սովորողների ցուցակները մ/մ-ների երաշխավորությամբ հաստատվում են հաստատության տնօրենի հրամանով: |
| 34. | Նոյեմբերի վերջ | Ներդպրոցական վերահսկողություն | ՄՄ նիստերի արձանագրությունների ստուգում, էլ մատյանների ստուգման վերահսկում, |
| 35. | Մինչև դեկտեմբեր 1 | Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողների գրավոր դիմումը դպրոցի տնօրենին: | 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին կարող է հանձնել այն առարկայի(ների) պետական ավարտական քննությունը(ները), որը(ոնք) չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել այն առարկա(ներ)ից, որը(ոնք) չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: |
| 36. | Դեկտեմբեր 1-8 | Պետական ավարտական քննություններ հանձնողների դիմում-հայտերի փոխանցումը «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ (ԳԹԿ): | Դպրոցի տնօրենը քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ: |
| | Դեկտեմբեր 14 | Մանկավարժական խորհրդի նիստ 12-րդ դասարանի սովորողների առաջին կիսամյակում 120-200 ժամ բացակայած սովորողների ՝ հարցի քննարկում մանկավարժական խորհրդում և համապատասխան տեղեկատվության ներկայացում: Հանձնարարել մեթոդմիավորումներին կազմել 12-րդ դասարանի առաջին | 66. 2022-2023 ուսումնական տարվանից սկսած՝ 12-րդ դասարանի առաջին կիսամյակում էլեկտրոնային ենթահամակարգում բացված հայտերի արդյունքում սովորողի բաց թողած դասերի ժամաքանակը 120-200 ժամ լինելու դեպքում սովորողը մինչև հունվար ամսին անցկացվող պետական ավարտական քննությունների սկիզբը լրացուցիչ քննություններ է հանձնում «Հայոց լեզու և հայ գրականություն», |

| | | | |
|---|---|---|---|
| | | *կիսամյակի համար լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների հարցատոմսերը:* | *«Հանրահաշիվ», «Երկրաչափություն» առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզկուլտուրա» առարկայից անցկացվում է ստուգարք:* |
| *38.* | *Դեկտեմբեր 16-19* | *Լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների հարցատոմսերի հաստատում Հաստատել 120-200 ժամ բացակայած սովորողների լրացուցիչ քննությունների ժամանակացույցը և տեղեկացնել նախարարությանը:* | |
| *39.* | *Դեկտեմբեր 26-28* | *Մանկավարժական խորհրդի նիստ*<br>• *առաջին կիսամյակում սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների ամփոփում,*<br>• *12-րդ դասարանի 1-ին կիսամյակում 120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների լր. քննությունների և ստուգողական աշխատանքների արդյունքների ամփոփում:*<br>• *12-րդ դասարանի սովորողներին պետական ավարտական քննություններին թույլատրելու մասին*<br>• *առաջիկա տարվա բյուջեի նախագծի քննարկում*<br>• *տնօրենի զեկույցը Հաստատության խորհրդի որոշումների կատարման վերաբերյալ*<br>• *Տնօրենի տեղակալի (տեղակալների), դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի և մ/մ նախագահների հաշվետվությունները*<br>• *Էլեկտրոնային մատյանների* | *Մանկավարժական խորհուրդը քննարկում է ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների, Հաստատության խորհրդի որոշումների կատարման, առաջիկա տարվա բյուջեի նախագծի և էլեկտրոնային մատյանների վարման հարցեր:* |

| | | | |
|---|---|---|---|
| | | վարման հարցերի քննարկում: | |
| 40. | Դեկտեմբեր 26-29 | Բյուջեի նախագծի ներկայացում Հաստատության խորհրդի հավանությանը: Ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ հաշվետվության ներկայացումը խորհրդի քննարկմանը: | Տնօրենը առաջիկա տարվա բյուջեի նախագիծը, Ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է կառավարման խորհրդի քննարկմանը: |
| 41. | Դեկտեմբեր 20-29 | Մեդալի հավակնորդ սովորողների նախնական անվանացանկերը ներկայացնել նախարարություն | Մինչև ապրիլի 10 Մեդալի հավակնորդ սովորողների նախնական անվանացանկերը առաջին կիսամյակն ամփոփելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Հաստատությունները ներկայացնում են մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն (այսուհետ՝ Վարչություն), իսկ Նախարարության ենթակայության և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների անվանացանկերը՝ Նախարարություն: |

Երկրորդ կիսամյակ
Հունվար - ապրիլ

| | Ամիսը, Ամսաթիվը | Գործողություն | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|
| 1. | Հունվար 3-8 | Երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացի նախապատրաստում | Տնօրենության կողմից՝<br>• կազմվում է երկրորդ կիսամյակի ուսումնական պլանը, դասացուցակը,<br>• կատարվում է դասաբաշխում,<br>• 12-րդ դասարանում ձևավորվում են առարկայական խմբեր՝ առաջնորդվելով օրինակելի ուսումնական պլանի պարզաբանումներով: |
| 2. | Հունվար | Պետական ավարտական քննությունների կազմակերպում | |
| 3. | Հունվար | Դասղեկների և մ/մ նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն | • |
| 4. | Հունվար 09-20 | Մանկավարժական խորհրդի նիստ.<br>քննարկել 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններին մասնակցած սովորողների քննական արդյունքները:<br>Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականի մասին զեկույց: | • Մանկավարժական խորհրդի նիստը քննարկում է պետական ավարտական քննություններ հանձնած 12-րդ դասարանի սովորողների արդյունքները և սահմանված կարգով կայացնում համապատասխան որոշումներ: |
| 5. | Հունվար 16-26 | Սովորողների ուսումնական առաջադիմության առաջին կիսամյակի ամփոփում:<br>Ծնողական ժողովներ | Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների առաջին կիսամյակի ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները: |
| 6. | Հունվարի 16-20 | Դպրոցի կառավարման խորհրդի նիստ.<br>ա. Ուսումնական տարվա առաջին կիսամյակի ֆինանսական և ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների քննարկում<br>բ. Ուսումնական | • Հաստատության տնօրենի ներկայացմամբ դպրոցի խորհուրդը քննարկում և հավանություն է տալիս ուսումնական տարվա առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությանը,<br>• Ի գիտություն է ընդունում ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:<br>• Հաստատության տնօրենի ներկայացմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | հաստատության ամենամյա ծախսերի նախահաշվի քննարկում<br>գ. Հաստատության զարգացման ծրագրի կատարման ընթացքի քննարկում | դպրոցի խորհուրդը քննարկում, հավանություն է տալիս և պետական լիազորված մարմնի հաստատմանը ներկայացնում հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը:<br>● Քննարկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման ընթացքը և կայացնում համապատասխան որոշում: |
| 7. | Հունվար<br>24-28 | «Բանակի օր» տոնին նվիրված միջոցառումներ | Կազմակերպվում է հետևյալ միջոցառումները.<br>● այցելություն «Եռաբլուր» պանթեոն,<br>● հանդիպում Արցախյան պատերազմների վետերանների հետ,<br>● ցերեկույթի կազմակերպում և այլն: |
| 8. | Հունվար<br>10-31<br>(ամենշաբաթ յա ռեժիմով) | Ներդպրոցական վերահսկողության իրականացում | ● Մատենավարության ստուգում<br>● Դասղեկի ժամերի և ուսումնական խմբակների պարապմունքների կազմակերպման ստուգում |

| | Ամիսը, Ամսաթիվը | Գործողություն | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|
| 9. | Հունվար-փետրվար | <u>Մանկավարժական խորհրդի նիստ.</u><br>Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքների ամփոփում և մարզային փուլի նախապատրաստում | Տնօրենության կողմից՝<br>● Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը ներկայացնում է օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքները |
| 10. | Փետրվար - մարտ | Հերթական ատեստավորում անցած ուսուցիչների դասավանդման արդյունավետության մշտադիտարկում: | ● Մշտադիտարկումն իրականացնում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները |
| 11. | Փետրվար | Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն՝<br>- Պատմություն և հասարակագիտություն առարկաների դրվածքի ուսումնասիրություն: | ● Ուսումնասիրությունն իրականացնում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորման նախագահը:<br>● Ամրագրել հրամանով, ամփոփել մանկխորհում: |

| | | | |
|---|---|---|---|
| 12. | Փետրվար 1-28 | Ուսումնական հաստատության ջեռուցման կազմակերպում՝ սանիտարական նորմերին (Գլուխ IV. Շահագործվող հաստատությունների օդի ջերմային ռեժիմին ներկայացվող պահանջներ) համապատասխան: դ. Զարգացման ծրագրի քննարկում: | • Ուսումնական հաստատության տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը կամ տնտեսվարը պարբերաբար հետևում է դպրոցի շենքի՝ դասասենյակների, մարզադահլիճի և այլ սենքերի ջերմային ռեժիմի պահպանմանը |
| 13. | Փետրվար | Շրջանավարտների խորհրդի ստեղծում: | • |
| 14. | Փետրվար 10-28 (ամենշաբաթյա ռեժիմով) | Ներդպրոցական վերահսկողության իրականացում: | • Մատենավարության ստուգում<br>• Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների վերահսկողություն |

| | Ամիսը, Ամսաթիվը | Քայլը | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|
| 15. | Մարտ 2-4 | Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալների և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն: | Քննարկվում է ԲՏՃՄ բնագավառի ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների բարձրացման հարցը: |
| 16. | Մարտ | Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն՝<br>- Մաթեմատիկա առարկայի դրվածքի ուսումնասիրություն: | Ուսումնասիրությունն իրականացնում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրյալ առարկայական մասնագետներ :<br>Ամրագրել հրամանով, ամփոփել մանկխորհում: |
| 17. | Մարտ | Ստուգողական գրավոր աշխատանքներ խորացված ուսուցմամբ առարկաներից 10-11րդ դասարաններում | Նպատակ՝ գիտելիքների և դասավանդման որակի ստուգում, նախապատրաստում փոխադրական քննություններին |
| 18. | Մարտ | Կազմել բյուջեի կատարման մասին | Դպրոցի բյուջեի նախագծի մշակման, |

| | | | |
|---|---|---|---|
| | 11-14 | տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու ժամկետները: | բյուջեի հաստատման և կատարման մասին հաշվետվությունների աշխատանքները կազմակերպելու նպատակով տնօրենը կազմում է դպրոցի բյուջետային օրացույց. մինչև ընթացիկ տարվա մարտի 15-ը կազմում է Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունները ներկայացնելու և հրապարակելու ժամկետները Տես՝ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 51: |
| 19. | Մարտ 27-31 | Կլոր սեղաններ | Ժողով-քննարկում տարբեր դասարաններում դասավանդող ուսուցիչների, դասղեկի, ուսուցչի օգնականի, հոգեբանի, անչափահասների տեսուչի, տնօրենի տեղակալների, տնօրենի մասնակցությամբ: |
| 20. | Մարտ 27-31 | Մանկավարժական խորհրդի նիստ | <u>Մանկավարժական խորհուրդը</u> քննարկում է հունվար-մարտ ամիսներին ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության, էլեկտրոնային մատյանների վարման, պատմություն և հասարակագիտություն, մաթեմատիկա առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքները, Տես՝ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 79-80: |
| 21. | Ապրիլ 3-7 | Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ | Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները: |
| 22. | Ապրիլ | Հունիս ամսին կազմակերպվող | Պետական ավարտական |

| | | | |
|---|---|---|---|
| | 1-30 | պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակի փոխանցում ԳԹԿ (12-րդ դասարան) | քննություններին մասնակցողների ցուցակն ըստ առարկաների դպրոցի տնօրենը էլեկտրոնային եղանակով լրացնում և փոխանցում է ԳԹԿ: |
| 23. | Ապրիլ 1-ից մայիսի 15 | 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների տոմսերի կազմում | 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների հարցատոմսերը կազմում են Հաստատության մեթոդմիավորումները: |
| 24. | Ապրիլ 4-5 | Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալների մասնակցությամբ խորհրդակցություն | Դպրոցի տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է տարվա ընթացքում սովորողների բացակայությունների նախնական հաշվառում անցկացնելու հարցը: |
| 25. | Ապրիլ 12-13 | Հերթական (պարտադիր) ատեստավորման ենթակա ուսուցիչների ցուցակների կազմում | Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերաբերյալ հաստատության տնօրենը անհրաժեշտ գրանցում է կատարում ԿՏԱԿ-ի Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում: |
| 26. | Ապրիլ | Բնագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրություն | Դրվածքի ուսումնասիրությունն իրականացվում է տնօրենի, ուսումնական գծով տեղակալների, մ/մ նախագահների կողմից և փոխադարձ իրականացվող դասալսումների և տնօրենության կողմից տրվող ստուգողական աշխատանքների միջոցով:<br>Ամրագրել հրամանով, ամփոփել մանկխորհում: |
| 27. | Ապրիլ15-30 | Պայմանով փոխադրված աշակերտների համար կազմակերպել վերաքննություններ (կազմել հանձնաժողով, հաստատել ժամանակացույց) | Դպրոցի սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եւ ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | *հաջորդ աստիճան փոխադրման կարգ (49,51, 52 կետ) https://www.arlis.am/documentview.aspx?docid=160662* |
| 28. | *Ապրիլ 27-28* | *Մանկավարժական խորհրդի նիստ* | *Քննարկում է ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության արդյունքները, հաջողություններն ու դժվարությունները, տալիս համապատասխան հանձնարարականներ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների բարձրացման ուղղությամբ:*<br>*Հանձնարարել մեթոդմիավորումներին կազմել 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների հարցատոմսերը:* |

*Մայիս-հուլիս*

| | *Ամիսը, Ամսաթիվը* | *Քայլը* | *Այլ տեղեկություններ* |
|---|---|---|---|
| 29. | *Մայիս 2-4* | *Պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննություններին նախապատրաստության գործընթացի քննարկում:* | *Հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննություններին նախապատրաստության ընթացքը, տալիս համապատասխան հանձնարարություններ: Անհրաժեշտության դեպքում քննարկվում է նաև ավագ դպրոցում փոխադրական քննություններին նախապատրաստության հարցը:* |
| 30. | *Մայիս 2-4* | *Անդրադարձ առարկայական* | *Հաստատության տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա* |

| | | | |
|---|---|---|---|
| | | օլիմպիադաներին սովորողների մասնակցության արդյունքներին: | տեղակալի և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը անդրադառնում է առարկայական օլիմպիադաներին սովորողների մասնակցությանը, նշում հաջողություններն ու դժվարությունները, խրախուսում օլլիմպիադայում աչքի ընկած սովորողներին և նրանց ուսուցիչներին: |
| 31. | Մինչև մայիս 05 | 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների տոմսերի կազմում, հաստատում տնօրենի կողմից: | 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների հարցատոմսերը կազմում են Հաստատության մեթոդմիավորումները: |
| 32. | Մայիս 17 | Մանկավարժական խորհրդի նիստ Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 10-12-րդ դասարանի սովորողների՝ հարցի քննարկում մանկավարժական խորհրդում և համապատասխան տեղեկատվության ներկայացում | Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած սովորողների հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում (ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ): Սովորողների բացակայությունների մասին տեղեկատվությունը, մանկավարժական խորհրդում քննարկվելուց հետո Հաստատության տնօրենի կողմից ներկայացվում է Նախարարություն և ԳԹԿ: Հանձնարարել մեթոդմիավորումներին կազմել լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների հարցատոմսեր նվազագույնը 3-4 տարբերակով: |
| 33. | Մայիս 18 | Լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների հարցատոմսերի հաստատում 10-11-րդ դասարանների փոխադրական քննությունների հարցատոմսերի ներկայացում | Առաջադրանքները և հարցատոմսերը Հաստատության տնօրենի հաստատմանն են ներկայացնում տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը և/կամ մեթոդմիավորման նախագահները: |

| | | | |
|---|---|---|---|
| | | *Հաստատության տնօրենի հաստատմանը* | |
| *34.* | *Մայիս 18* | *Հաստատել 120-200 ժամ բացակայած սովորողների լրացուցիչ քննությունների ժամանակացույցը և տեղեկացնել նախարարությանը:* | *Քննություններին կարող են մասնակցել Նախարարության, Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի և (կամ) լիազոր մարմնի ներկայացուցիչը (ները):*<br>*72. Լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների հիման վրա նշանակվում են սովորողի տարեկան գնահատականները:* |
| *35.* | *Մայիս 18-20* | *Անդրադարձ Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարմանը* | *Դպրոցի տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով նրա տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարման ընթացքին, գնահատում արդյունքները և տալիս համապատասխան հանձնարարություններ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման ուղղությամբ:*<br>*Խորհրդակցության ընթացքում բարձրացված հարցերը քննարկման են դրվում հաստատության մանկավարժական խորհրդի առաջիկա նիստում:* |
| *36.* | *Մայիս 18-26* | *Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած սովորողների՝ լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների* | *120-200 ժամ բացակայության դեպքում սովորողները մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացուցիչ քննություններ են հանձնում «Մայրենի» (ազգային փոքրամասնությունների դասարանների համար «Մայրենի լեզու և գրականություն», «Ասորերեն», «Ռուսաց* |

| | | | |
|---|---|---|---|
| | | *անցկացում:* | *լեզու»), «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից, ամփոփիչ ստուգողական աշխատանքներ՝ ուսումնական պլանով սահմանված մյուս առարկաներից: «Ֆիզկուլտուրա» առարկայից անցկացվում է ստուգարք:*<br>*12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում 120-200 ժամ բացակայություն ունենալու դեպքում սովորողը լրացուցիչ քննություն է հանձնում այն առարկաներից, որոնք ընտրել է:* |
| *37.* | *Մայիս 30-31* | *մանկավարժական խորհրդի նիստ* | *120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների արդյունքների ամփոփում: 10-11-րդ դասարանների սովորողներին փոխադրական քննություններին թույլատրելու,*<br>*12-րդ դասարանի սովորողներին պետական ավարտական քննություններին թույլատրելու հարցի քննարկում:*<br>*Փոխադրական քննությունների ժամանակացույցի հաստատում:* |
| *38.* | *Մայիսի վերջ - հունիս* | *Պետական ավարտական և փոխադրական քննությունների անցկացում:* | *Ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննություններն անցկացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված՝ սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական և կենտրոնացված պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգի պահանջներին համապատասխան:* |
| *39.* | *Հունիս* | *Նախնական դասաբաշխում:* | *Դպրոցի հաջորդ ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների հիման վրա մեթոդմիավորումները նախնական դասաբաշխման հարցը կարող են քննարկել հունիսի* |

| | | | |
|---|---|---|---|
| | | | *երկրորդ կեսին՝ մանկավարժական աշխատողների արձակուրդ գնալուց առաջ:* |
| *40.* | *Հուլիսի 2-8 / օգոստոսի 20-30* | *Վերաքննությունների անցկացում:* | *Վերաքննություններն անցկացվում են Նախարարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում: Տես նաև՝ <u>Ուսումնական տարվա արդյունքների ամփոփման և հաջորդ ուսումնական տարվա նախապատրաստության գործընթացի քայլեր. ուղեցույց (օգոստոս-սեպտեմբեր)</u>:* |
| *41.* | *Հուլիսի 1-8* | *Միջնակարգ կրթության ատեստատների (ծածկագրի) տրամադրում շրջանավարտներին:* | |

| | | | |
|---|---|---|---|
| *42.* | *Օգոստոսի 18* | *Մանկավարժական խորհրդի նիստ* | *Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում օգոստոսի 20-30-ի վերաքննությունների (լրացուցիչ քննությունների) հանձնաժողովների և ժամանակացույցի վերաբերյալ : Հանձնարարել դասղեկներին տեղեկացնել ծնողների վերաքննությունների մասին:* |
| *43.* | *Օգոստոսի 18* | *Տնօրենի հրամանը վերաքննությունների հանձնաժողովների և ժամանակացույցի վերաբերյալ:* | *Տնօրենի հրամանով, հիմք ընդունելով սովորողների փոխադրման և ավարտման կարգի պահանջներն ու մանկավարժական խորհրդի որոշումը, հաստատվում են վերաքննությունների (լրացուցիչ քննությունների) հանձնաժողովների կազմն ու դրանց ժամանակացույցը:* |
| *44.* | *Օգոստոսի 20-30* | *Վերաքննությունների (լրացուցիչ քննությունների) անցկացում:* | *Հիմք ընդունելով սովորողների փոխադրման և ավարտման կարգի պահանջներն ու տնօրենի հրամանով հաստատված քննությունների հանձնաժողովների կազմն ու դրանց ժամանակացույցը, անցկացվում են վերաքննությունները:* |

| | | | |
|---|---|---|---|
| 45. | Օգոստոսի 20-30 | Դասագրքերի բաշխում | Դասագրքերը բաշխվում են տնօրենի հրամանով՝ ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգի պահանջներին համապատասխան |
| 46. | Օգոստոսի 25-31 | Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից մեթոդմիավորումների ներկայացրած նախնական դասաբաշխման առաջարկի քննարկում և որոշման կայացում: | Մանկավարժական  խորհուրդն այս դեպքում որոշում է ընդունում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը որոշակի առարկայախմբերի հատկացնելու վերաբերյալ: |
| 47. | Օգոստոսի 25-31 | Դպրոցի առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում: | Հաստատության ուսումնական պլանը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատվում է տնօրենի հրամանով: |
| 48. | Օգոստոսի 25-30 | Նախորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքների ամփոփում՝ հիմք ընդունելով Ուսումնադաաստիարակչական աշխատանքի տարեկան պլանը (ՈւԴԱՊ) | Ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքներն ամփոփվում են մանկավարժական  խորհրդի նիստում |
| 49. | Օգոստոսի 30-31 | Առաջիկա ուսումնական տարում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում : | Բաշխումը կատարվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, Դպրոցիօրինակելի կանոնադրության, Մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրերի և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին ու Հաստատության զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան: |
| 50. | Օգոստոսի 30-31 | Հանդիպում վերաքննության արդյունքում 1 կամ 2 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողների ծնողների հետ: | 10-րդ և 11-րդ դասարաններում վերաքննության արդյունքում 1 կամ 2 առարկայից 1-3 միավոր գնահատված սովորողը՝<br>1) չի փոխադրվում հաջորդ դասարան և կրկնում է դասընթացը կամ<br>2) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա |

| | | | |
|---|---|---|---|
| | | | *փոխադրվում է հաջորդ դասարան՝ պայմանով, որ մինչև հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ավարտը պետք է հանձնի 1-3 միավոր գնահատված առնվազն մեկ առարկայի քննությունը, իսկ երկրորդը՝ մինչև օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում:* |
| *51.* | *Օգոստոսի 30* | *Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, մանկխորհրդի քարտուղարի ընտրություն:* | *Մանկավարժական խորհրդի կազմը հաստատվում է տնօրենի հրամանով մեկ ուսումնական տարի ժամկետով: Հաստատվում է նաև մանկխորհի նիստերի ժամանակացույցը:* |
| *52.* | *Օգոստոսի 30* | *Մեթոդմիավորման նախագահների և դասղեկների կազմի հաստատում:* | *Տնօրենը հրամանով հաստատում և մանկավարժական խորհրդի նիստում ներկայացնում է մեթոդմիավորման նախագահների և դասղեկների անվանական կազմը:* |
| *53.* | *Օգոստոսի 30* | *Վերաքննությունների արդյունքների ամփոփում:* | *Վերաքննությունների արդյունքների հիման վրա մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, դասընթացը կրկնելու կամ հաստատությունից դուրս մնալու մասին: Մանկխորհրդի որոշումը հաստատվում է տնօրենի հրամանով: Այդ որոշումը հիմք է հանդիսանում հաջորդ ուսումնական տարում դասարանների կազմավորման համար:* |
| *54.* | *Օգոստոսի 30-31* | *Առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակի կազմում:* | *Առաջիկա ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասացուցակի նախնական տարբերակը կազմվում և ուսուցիչներին է ներկայացվում մինչև ուսումնական պարապմունքների սկիզբը:* |
| *55.* | *Օգոստոսի 30-31* | *Հանրակրթական դպրոցի դասարանների կազմավորում:* | *Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, տնօրենի հրամանով՝ պահպանելով ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության* |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դասարանների կազմավորման կարգի և ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունում բազմահամակազմ դասարանի կազմավորման կարգի պահանջները: |
| 56. | Օգոստոսի 30 | Խորհրդի հաստատմանը ներկայացնել դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները: | Դպրոցի կանոնադրություն 48/7 կետ |
| 57. | Օգոստոսի 31 | Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների, տնօրենի տեղակալների, մեթոդմիավորման նախագահների, դասղեկների տարեկան հաշվետվությունների հաստատում: | Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է տնօրենը: |
| 58. | Օգոստոսի 31 | Ուսումնադաստիարակչական աշխատանքերի տարեկան պլանի (ՈւԴԱՊ), տնօրենի տեղակալների, մեթոդմիավորումների, դասղեկների տարեկան աշխատանքային պլանների հաստատում : | Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է տնօրենը: |